Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
F-35

891.99
Ա-35
ԿԳ.

ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՐԻԱՄԸ.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ԵԶՆԻԿ Վ. ԱՐԳԱՊԵՏԻ ԱԳԱՀՋԻՆԻՈՅ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Ա. Ն. ՅԱՀՆԱԶԱՐԵԱՆ
ԹԱՍԳԻՒՂ
= 1869 =

1986

546-42

ԱՐ

ՀԱՅԿ-СОР

1561 Գ
39

2001

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մարդկային յառաջադիմութեան ու լուսաւորութեան ոգին և անոնց շարժումը կանոնաւորող կշիռը՝ գեղեցիկ սեռն է, որ զմարդկութիւնը իր խանձարրոց և օրօցքին մէջ կրթելով՝ կրնայ ապագային արդիւնքը բեղմնաւորել, եթէ ինքն ալ Ֆենելոնի ըսածին պէս՝ խոհուն, համեստ, իմաստուն և Կրօնի իսկական հոգւոյն մնունդ առած կարող վերատեսչութեան փրկաւէտ հովանոյն ներքև դաստիարակուած ըլլայ։ Իսկ եթէ բարոյական այս սկզբանցն հակառակ այնպիսի ձեռքի մը տակ մարդուած ըլլայ, որ խոհականութենէ և համեստութենէ զիրկ, տգէտ, նախապաշարեալ, և անտարբեր Կրօնից նրուիրական տարերաց՝ անուամբ միայն իր դաստիարակական սրբազան պաշտօնին շարունակութեան հոգ տանի, անշուշտ այնպիսի ինքնակար և ապառնոյն յառաջադիմական խարիսխներն խորտակող, և ազգութեան լաստափայտը՝ անդրալեռնականութեան փրփրաղէզ և յոխորտ կոհակներուն մատնելու աշխատող ջանքը՝ զգեղեցիկ սեռը ազգին թշուառութեանցն ու տառապանացը բորբոքը հրահրելու միայն կընտրամաղրեն՝ փոխանակ այն քարերաբ և վսեմ կոչման՝ զոր Երկինք սահմանելով վճռեցին իրեն համար, այն շնաշխարհիկ կոչման՝ կ'ըսեմ, ծառա-

յեբընելու , որպէս զի օր մը Ազգին արտասուքն սրբելու շնորհն ընող աջերուն փառքն ու պարծանքը և յաւիտենական անմահ յիշատակը՝ կոթողներ սահմանել, բարեբար մայրութեան , որ անոնց սիրտերն ու հոգիները դատիարակեց :

Այո՝ զեղեցիկ սեռը ազգին սպագայն պիտի ապահովի իւր ներկայ սերունդը կրթելով . մանկի ը իրեն ջամբուած մայրական կաթին հետ մէկտեղ պիտի սովրի՝ Աստուածպաշտութիւն , Ազգասիրութիւն և Հայրենասիրութիւն . այս երեք մեծական բառերը՝ մանկան սուր ականջներուն թափանցող ա. ռաջին խօսքերն պիտի ըլլան . առաջին անգամ երբոր անոր շրթանց փակ դռներն կը բացուին , թոթովախօս լեզուն պիտի հնչէ՝ Աստուած , Ազգ և Հայրենիք : Անկից ետքն է , որ՝ մինչդեռ ազուն խելքը կ՝սկսի զանազան առարկայից վրայ թափառել և հետազօտել անոնց կարողութիւնները , մայրը պարտաւոր է սովրեցնել անոր՝ ի՞նչ է Աստուած և իւր Օրէնքները . ի՞նչ է Ազգ և անոր իրաւունքը . ի՞նչ են Հայրենիք և մեր անոր նկատմամբ վերբերեալ պարտաւորութիւնները : Վերջապէս կատարեալ Աստուածապաշտ , Ազգասէր և Հայրենասէր ըլլալու համար ի՞նչ յատկութիւններ ունենալ պէտք է . ահա առանք են ինքնաստանելորդ Լուսաւորեալ դարուս պահանջած տարրերը , որոնցմով պիտի կարմանկերպի աչառանին . փոխանակ զի անցեալը չվե.

բաղաւնար , և անցելոյն տխուր հետքերը Պատմութեանց էջերը միայն մեզի կ՝աւանդեն :

Ինչո՞վ կրնանք մեր յուսադրած նպատակին հասնիլ . — զեղեցիկ սեռին ներկայ յաջորդութիւնը՝ իրեն ինկած բաժնէն օգուտ քաղելու գովելի անձկութեամբ՝ աշխատելու է ոչ թէ միայն ատանին հոգերու կարգադրութեան , այլ և միտքն օգտակար ուսմամբք բարգաւաճելու . մանաւանդ թէ նախ ինքը պիտի սովրի վերոյիշեալ պայմանները , որպէս զի անով կարողութիւն ստանայ իւր ապագայ սերունդն այ 'ի լաւ անդր կատարելագործելու՝ այնպէս , ինչպէս որ Եւրոպա շարունակելու հետամուտ է այսօր :

Ահա ասոր համար է , որ մենք ալ ներկայն օգուտ քաղելով՝ ազնիւ Հայկուհի , զՁեզ խրատելու գովելի փափաքն ունեցանք՝ հետեւեալ պատմութիւնն թարգմանելով Ձեզի նուիրելու , որպէս զի Լերպիւ մը մենք ալ մասն ունեցած ըլլանք Ձեր յառաջադիմական ոտնիոխներուն օժանդակութեանը մէջ : Այս պատմութեանը մէջ պիտի տեսնէք նախ՝ մօր մը իր զաւկին վրայ ունեցած ճշմարիտ սէրը , և թէ ի՞նչ ընթացքով կը ջանայ առաջինը դատիարակելու ղերկրորդը : Երկրորդ՝ զաւկի մը իր սանհրաժեշտ պարտուց անթերի գործադրութեանը հսկելը , և թէ ի՞նչ կերպ գործադրած է նա հասնելու անոր : Երկուքին մէջն ալ կրփայլին՝

Սուտուածպաշտութիւն, ճշմարիտ Քրիստոնէութիւն և երախտագիտութիւն։

Ուրեմն կը խնդրենք Ձեզնէ՝ աղնիւ Հայկուհիդ, որ ուշադրութեամբ քննէք ասիկայ։ Կը յուսանք, որ՝ եթէ մեր այս փոքրիկ աշխատութիւնը ձեր նեղողջմտութիւնն ընդունելու բաղդն ու պատիւն ունենայ՝ զոր իբր՝ի նուէր կ՚ընծայենք Ձեզ Տարեգրելխոյս առթիւ, ալ աւելի օգտակար գործքերու ալ ձեռնամուխ ըլլանք. ան ատեն պիտի տեսնէք, որ ճշմարտիս կրցանկանք Ձեր յառաջադիմութեանն ու լուսաւորութեանը։

" Եւ որ ոք ընկալցի մանուկ մի այսպիսի յանուն իմ՝ զիս ընդունի ,, . Մատթ . ԺԸ . 5 :

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ

ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՐԻԱՄԸ

Անոնք՝ Պուրկ — Ան — Պրէսի օրա-վարձ մշակի մը կինն էր : Ամուսնոյն և միամօր Մարիամ դստերն հետ՝ նոյն քաղաքին Նօթրը—Տամ—Տիւ—Պրուն անուն հին եկեղեցւոյն շուրջը հիւղի մը մէջ կը բնակէր : Աղքատ էին , և օրական ոգեսպահիկը իրենց ճակտին քրտինքովը կը հայթայթէին . բայց և այնպէս միշտ ուրախ և գոհ . վասն զի այն խոնարհ յարկին ներքև ժուժկալութիւնն իրենց բնակիչ էր : Այս ժուժկալութիւնը , այս գոհունակութիւնը իրենց կրօնական սկզբունքն էր , որով այս աշխարհը իբրև փրկութեան տեղի ըմբռնած ել-

ալով՝ կընկատէին հոն անվերջ երջանկութեան մը հանդիպահայեաց տեսութիւնը, որ գերեզմանէն յայնկոյս իրենց կ՚սպասէր։

Ասոնք էին այն Քրիստոնէական մըտածմունքը, որ յիշեալ բարի ընտանեաց մօր միտքը կ՚զբաղեցնէին յաւէտ, և զանի կ՚ուղղէին իր բովանդակ գործառնութեանց մէջ։ Այսպէս պիտի ըլլան ձեր խոկմունքն ալ՝ պատանի ընթերցողներ, եթէ երջանկութիւն կը խնդրէք։ Այս պարագայները՝ որչափ ալ ծանրը երևին ձեզի, սակայն և այնպէս ձեր հասակին պատշաճ են։ Եւ թէ որ այժմէն ձեր միտքերը անոնցմով մշակէք, հոն ձեզ համար՝ (թէպէտ ուշ) մեծ մըխիթարութիւն մը կը գտնէք, երբոր այս կեանց տրտմութիւններն և տառապանքը ամէնուստեք ձեզ պատեն, և ընկճել սպառնան։

Այսպէս Աննայի բարեպաշտութիւնը

Հաստատ վրայ հիմնեալ՝ հնարելն չէր անհաստատ լինիլ, և բոլոր գործերը կը՝ընպատէին անոր։ Քրիստոնեայ հաբէք մը ակնկալեալ ամէն յատկութիւններն ունէր։ Գողտր դգայմամբ ամուսնոյն վրշտայը մասնակից կըլլէր, և քաղցրութեամբ ու վեհութարութեամբ լի խօսքերով կ՚սփոփէր զանի. իսկ աղջկանը համար ալ մարդ ամէնէն փափուկը և լաւագոյնն էր։

Բաւական չէր համարեր աղջիկը սիրել միայն, ինչպէս որ ուրիշ մարդ վրայ յաճախ կը տեսնենք. այլ անկեղծարար նորա երջանկութեանը կը ցանկար. այսուդիտաւորութեամբ մատաղ հասակէն զանի կը վարժեցընէր համեստութեան, աշխատասիրութեան և հնազանդութեան, մանաւանդ երկիւղածութեան՝ որ իմաստութեան հիմն է։ Միայն ղբպրոց խրկելու գոհ չըլլալով՝ ուշադրութեամբ զանի 'ի յառաջադիմութիւն

խրախուսել պարտք համարած էր անձին. ուստի նոր սովրած դասերը տանը մէջ իսկ կը կրկնէր։ Երբ փոքրիկ Մարիամը քանի մը վայրկեան պարապ կ'ունենար, զանոնք օգտակար աշխատութեան կամ անմեղ զուարճութեան կը նուիրէր, ուրեմն կ'ստանչնորդէր միշտ բարի մայրը, որպէս զի մարմնոյն զարգացմանը նպաստող միջոցը՝ հոգւոյն վնասակար չըլլայ։

Այն առաքինութիւնները՝ որոնց համար աւելի խիստ էր Անն, երկիւղածութենէն յետոյ՝ ծնողասիրութիւնն և հնազանդութիւնն էին. այն կոյր մայրերէն չէր, որ վնասակար գգուանօք իրենց զաւակաց մոլութեանցն անտարբեր՝ նոյա թշուառութեանցը պատճառ կ'ըլլան, կը դրդուատէր՝ այո՛, աղջկանը գովութեան արժանի գործերը, բայց անոր վրայ նը-կատած յանցանքներն ալ անաչառ կը յանդիմանէր։ Այս կերպով անոր վրայ օգտակար իշխանութիւն մը շահեցաւ.

վասն զի հայրը օրն 'ի բուն արտաքին աշխատութեանց պարապելուն համար՝ չէր կրնար աղջկանը դաստիարակութեան անձամբ հոգ տանիլ։

Երբոր Մարիամ չորս տարեկան եղաւ, մայրը սովրեցուց անոր գՍատուած ճանչնալ հետևեալ կերպով։ Ինքը անկողինէն ելած, պառկած և սեղան նստած ատեն՝ չէր մոռնար երբէք խաչակնքել. յետոյ խորհրդաւոր ձայնով ՀԵրամեանդ աղօթք մը կ'ընէր՝ Աստուծոյ երախտեաց-ը շնորհակալ ըլլալու, և ուրիշներ ալ խնդրելու։ Մարիամ՝ շատ անդամ ուշադրութեամբ մտիկ կ'ընէր, բայց այս իրեն դեռ անհասկանալի բաներուն բացատրութիւններն ուզելու չէր համարձակեր։ Սակայն մայրը երկար ժամանակէ 'ի վեր կը յանկար, որ փոքրիկ աղջիկը այս մասին հարցմունքներ ընէ։

Վերջապէս օր մը Մարիամ՝ որոյ աղջիկը, երկար աշխատութենէ մը

գրգռուած էր, իւր հասակին յատուկ մեծ անհամբերութեամբ մը ճաշին կ'սպասէր։ Աննա նորա կամքը կատարեց. և սեղան նստելէն առաջ՝ սկսաւ բարձր ձայնիւ և սովորականէն երկար աղօթք մի կարդալ։ Մարիամ զարմանալով ունկընդրութիւն կ'ընէր. ու երբ մայրը աղօթքն աւարտեց՝ պատճառն հարցուց անոր։

— Ը՞սէ՛ ինձի՝ զաւակս, պատասխանեց մայրը. երբոր քեզի զուարճալի նիւթեր տայի՝ ի՞նչ կ'ընէիր դու այն ատեն։

— Շնորհակալ կ'ըլլայի՝ սիրելի՛ մայրիկ։

— Շատ աղէկ. ահա ես ալ նոյնը կ'ընեմ. Աստուծոյ գոհութիւն կըտամ, որ մեզի անուանդ կը պարգևէ, և կ'աղօթեմ մեր առատաձեռն բարերարայ համար։

— Ես կը տեսնեմ, որ հայրս ալ նոյնը կ'ընէ. սակայն ինքը չէ՞, որ դրամ կը շահի, և դու անով մեզի հարկաւոր ու-

տելիքները կը գնես։

— Համբերէ՛ զաւակս. ճաշէն յետոյ քեզի կը բացատրեմ ասոնք։

Երբոր սեղանէն ելան, Աննա գնաց դղրոյէն փոքրիկ գեղեցիկ գիրք մի բերաւ, ու ըսաւ Մարիամին.

— Հիմայ լսէ՛ ինձ՝ զաւակս. զմայլելի պատմութիւն մի պիտի կարդամ քեզի, և դու պիտի ջանաս զայն ըմբռնելու. սա քեզի պիտի սովրեցընէ, թէ ինչո՞ւ համար և ի՞նչ նպատակաւ ծնողքդ շնորհակալութիւն կը մատուցանեն Աստուծոյ՝ սեղան նստած ատեն։

Եւ սկսաւ կարդալ փոքրիկ Հենրիկոսին պատմութիւնը, և թէ նա ի՞նչպէս ճանչցաւ զԱստուած։ Մայրն արդէն այս շահաւէտ պատմութեան ընթերցումն աւարտած էր, երբ Մարիամ՝ դեռ վայրկեան մի լուռ և խոր մտածութեանց մէջ ընկղմեալ մնալէն յետոյ՝ վերջապէս 'ի նշան ուրախութեան ձեռ-

քերն իրարու զարնելով աղաղակեց. «Ո՛հ՝ ո՞րքան գեղեցիկ և սքանչելի է այս պատմութիւնը։ Հիմայ ես ալ գիտցայ, թէ մեր գլուխներէն վեր արևն ու աստղերը հաստատողն ո՞վ է։ Հիմայ ճանչցայ Հենրիկոսին պէս այն Լակը, որ զմեզ ամէն արարածներէն դերագոյն ստեղծեց։ Ասկից ետքը ես ալ կ'ուզեմ այսպէս միշտ շնորհակալ լինիլ Իւր բարերարութեանցը՝ ինչպէս որ դուք կ'ընէք։ Բայց ըսէ՝ ինձի՝ մայրիկ, ի՞նչպէս կրնամ Անոր հետ ըստ պատշաճի խօսակցիլ, և դիս իրեն նուիրել։

Աննա այլայլութեամբ առաւ դիպիկը զաղջիկն, և Խաչին նշանը երեսին վերայ կնքել տալէն յետոյ՝ ձեռքերը միաւորեց. պարզ և ներդաշնակ ձայնիւ սկսաւ Տէրունական աղօթքը՝ որ աղօթից ամէնէն գեղեցիկն է, և զոր Յիսուս Քրիստոս սովրեցուց իւր Աշակերտաց։

«Աղը՝ յաւելցուց մայրը, դու ինձի պիտի կրկնես Տէրունական աղօթից սկզբնաւորութիւնը, և պիտի բացատրես ալ։ Աղօթելէն առաջ պէտք է որ մեր ըսածն հասկընանք, որպէս միայն կըրնանք պատուղը վայելել։ Աղօթքը ուրիշ բան չէ, բայց եթէ Աստուծոյ և մարդկան մէջ խօսակցութիւն մը։ Արդ ինչպէս որ մէկու մը ներկայանալու ժամանակ՝ նախ և առաջ մեր խօսելիքը պէտք է մեզ դիտնալ, և մեր գործածելիք բառերուն արժանաւորութիւնը ճանչնալ, այնպէս պիտի ըլլայ մեր Աստու-

ծոյ հետ խօսիլ ուզած ատենն ալ։ Ու-
րեմն վայը »։

Հետևեալ օրը հագիւ թէ աղջիկն ար-
թընցաւ, և ահա մայրը անկողնոյն կից
նստած էր։ Իսկոյն ձեռքերը տարածեց
դէպ 'ի անոր, և աղաղակեց.

— Բարի լոյս՝ մա՛յր իմ. հանդիստ
քնացա՞ր։

— Այո՛՝ զաւա՛կս, պատասխանեց
մայրը. բարի Տէրը ծնողացդ քաղցր
և հանդիստ գիշեր պարգևեց, և այն-
պիսի առողջութիւն տուաւ՝ որ շատ
օգտակար է մեզի մեր պարէնը ճարելու
համար։ Ես արդէն աղօթքս ըրի 'ի բո-
լոր սրտէ. վասն զի պէտք է որ օրուան
առաջին վայրկեանները զանոնք մեզի
Պարգևողին նուիրենք։

— Ես ալ կ'ուզեմ՝ այնպէս շնորհա-
կալ ըլլալ այս գիշեր վայելած հանդարտ
քնոյս համար։

Աղջիկը ծնկան վրայ եկաւ, ձեռքե-

ը միաւորեց, և քնքոյշ ժպտով մը ը-
ռաւ.

« Հայր մեր՝ որ յերկինս, սուրբ և-
զիցի անուն Քո »։

— Խիստ լաւ՝ զաւա՛կս, պատասխա-
նեց մայրը՝ որ ինքն ալ ձեռքերը միա-
ցուցած էր, հիմայ ինձի հետ ալ նոյն
աղօթիս երկրորդ մասը կրկնէ՝. « Սուրբ
եղիցի անուն Քո »։ Բայց գիտե՞ս, թէ
ի՞նչ կը նշանակեն արտասանած բա-
ռերդ։

— Անտարակոյս. դեռ քիչ ժամանակ առաջ ինձ բացատրեցիր դու զանոնք. ես ի՞նչպէս կրնամ մոռնալ։ Ահա մեկնութիւնը։ Աստուած՝ որ երկինքն է և բոլոր մարդկան հայրը, հանապազ ամէն իւր բարութիւններովը կը լեցընէ։ Նորա կը վերաբերի մեր կեանքը. որոյ համար պարտաւոր եմք մեր կենաց ամէն մէկ րոպէին մէջ շնորհակալ լինել նրան, սիրել զինքը և օրհնել նրա սուրբ անունը։

— Այսինքն պիտի պատուեմք Նորա անունը։ Եւ ի՞նչպէս կրնամք պատուել... վարուելով Նորա կամաց հաճմամբ, ինչպէս որ բարի և իմաստուն որդիք կը վարուին իրենց ծնողաց հետ։ Ի՞նչ մեծ պատիւ և ի՞նչ մեծ ուրախութիւն կայ ծնողաց համար՝ իմաստուն և առաքինի զաւակներ ունենալն ասելի։ Բնական չէ ըսել միայն Աստուծոյ. «Սուրբ եղիցի անուն Քո». այլ պէտք է ճշմարտիւ օրհնել զինքը՝ մեր բոլոր գործառնութեանց մէջ Նորա սուրբ պատուիրանաց համապատասխան շարժելով։

Հետևեալ օրը Մարիամ երրորդ մարն ալ կատարեց, և ըստ առաջնոյն յաջողութեամբ բացատրեց։ Այս ընթացքը շարունակեց նա, մինչև նոյն ուղիքը բոլորովին աւարտեց։ Այս կերպով եղաւ նա բարեպաշտ, և առաքինութեան մէջ ալ երագընթաց յառաջադիմութիւն ունեցաւ։ Զէ թէ միայն տուտուզը, ցերեկը և իրիկունը կ'աղօթէր նա, այլ ամէն առեն. որպէս զի զԱստուած միշտ ներկայ ունենոյ դէմ յանդիման։ Ահա այս է այն նպատակը, առ որ պէտք է ուղղէ զինքը Քրիստոնեայն։

Մարիամ շուտով գերազանցեց իւր բոլոր փոքրիկ աշակերտակիցները՝ ընթերցման, գրութեան, Քրիստոնէական վար-

դասեւորութեան եւ սրբազան պատմութեան մէջ։ Ժողովրդասէրը եւ դպրոցի վարժուհին կը սիրէին զանի եւ կը գովէին՝ բարի վարուցը, դասուց մէջ ունեցած ուշադրութեանը եւ բարեպաշտութեանը համար։ Բայց ինչպէս որ վերը յիշեցինք, սա իր բոլոր յաջողութիւնները մօրը պարտական էր, որ եկեղեցւոյն եւ դպրոցին մէջ առած դասերը ամէն օր տանը մէջ ալ կրկնել կուտար։ Տա՛ր Աստուած, որ ամէն ծնողք՝ փոխանակ իրենց ամբարիշտ խօսքերովը, եւ մանաւանդ իրենց վատ օրինակներովը զաւակաց բարքը ապականելու՝ մի եւ նոյն խնամքը գործադրէին ամէնքնելու այն բարեպաշտական սերմերը, զորս ուսուցիչք կը ջանան իրենց աշակերտաց սրտից մէջ սերմանել։ Մարիամ չէր համարձակեր երբէք իւր վարժուհիէն գանգատելու, վասն զի մայրը իրաւունք չտալէն զատ՝

անդադար կը կրկնէր իրեն մանաւանդ, թէ ո՞րքան պէտք է երախտապարտ լինիլ անոր՝ իւր կրթութեանը նկատմամբ նոյա կրած նեղութեանցը համար, եւ ո՞րչափ անիրաւ է այն տղան, որ իրենց հասակաւը եւ փորձառութեամբ քան զինքն գերազանցող գիտուն եւ իւր բարւոյն համար աշխատող անձերուն դէմ ապերախտ կըլլայի, երբ ինքը զինքն անգամ չճանչեր։

«Ինչպէս ծնողք՝ այնպէս մանկունք» կըսէ առածը. եւ ահա հոս կըհաստատուի. եթէ Մարիամ աչաց առջեւն չունենար ցանգ իւր մօր բարի օրինակը, ո՞վ կ՚երաշխաւորէր, թէ Քրիստոնէական եկեղեցւոյ մէջ ընդունած դասերը՝ աղջկան սրտին մէջ խորունկ արմատներ պիտի ձգէին, եւ շուտով չպիտի ապականուէին՝ մոլի տղոց պատշաճ անգործութեամբ, հետեւաբար եւ հանապազորդութեամբ։

Անն սովորութիւն ունէր արշալուսին ելնել անկողնէն, և եկեղեցի երթալ՝ թէ՛ ամառը և թէ՛ ձմեռը, թէ՛ գեղեցիկ և թէ՛ գէշ եղանակայ մէջ։ Սուրբ Պատարագին ներկայ գտնուելէն յետոյ՝ տուն կը վերադառնար, և գործի կ՚սկսէր ուրախ և զոհ սրտիւ։ Իւր այրը՝ որովհետեւ քաջ և Աստուածավախ մարդ էր, կ՚ուզէր որ կինը անձրեւի կամ ձիւնի ժամանակ տնէն դուրս չելնէ. բայց Անն կը պատասխանէր, թէ միրկարար գործի մի հետեւելու համար պէտք չէ գէշ եղանակէն վախնալ։

— Ներէ՛ սիրելիս, բաւ օր մը այրը. ինձ անանկ կը թուի, որ մեղի պէս շարաթն 'ի բուն աշխատող գործաւորայ բաւական է միայն Կիւրակէ օրերը եկեղեցի երթալ։ Բարի Տէրը տակից տալին չպահանջեր։

— Ա՛հ՝ եթէ գիտնայիր դու, թէ ո՞րքան դիւրին կըլլայի ինձ աշխատու-

թիւն մի, երբ աղօթքով ամրացած եմ. և ո՞րչափ կը յաջողի ձեռնարկութիւնս, երբ երկնից օրհնութիւնը կը կոչեմ նոցա վերայ։

— Բայց առանց սենեակէդ դուրս ելնելու չե՞ս կարող անձնդ Աստուծոյ նուիրել։ Բարի աղօթք մի՝ ուր որ ալ լինի, Աստուծոյ հաճելի է։ Կարօտութիւն չկայ տարր համար յուրտ և անձրեւոտ ժամանակներ եկեղեցի վազել հիւանդանալու։ Զէ՞ որ Աստուած ամէն տեղ ներկայ է։

— Անտարակոյս. բայց մարդ այնքան տկար և տգիտանք թշուառ է, որ իւր միտքը՝ փոխանակ սուրբ Սեղանի վերայ բազմեալ Յիսուսի Քրիստոսի ներկայութենէ շնչեալ արբազան խորհուրդներով զբաղելու՝ ամէն վայրկեան տանը մէջ գտնուած հաղարուամէկ առարկայներու վրայ կը ցրուի. ան տանն իւր աղօթքը տնէօր և թոյլ կը լլլնի։

Ասի այսպէս գիտնալով մեր նախնիք՝ յաճախ եկեղեցիներ կառուցեր են քան զներկայ սերունդը, որ այնքան վոյթեռանդն չէ։ Ինչո՞ւ շիներ են ուրեմն այս բոլոր տաճարները, թէ որ իրաքանչիւր Հաւատացեալ պատրուակաւ մի տունը նստելով կարող էր իւր առանձնական աղօթքն բարձրացնել առ Աստուած։ Յիսուս ըսաւ. «Տուն իմ տուն աղօթից կոչեսցի»։ Եւ ի՞նչ սխրալի տեսարան կըլինի Քրիստոնէից համախումբ ժողովմանէն աւելի գեղեցիկ, երբ մի և նոյն խորհրդով միաբանած, և մի և նոյն բարեպաշտական զգայմամբք ոգեւորուած՝ Ս. Պատարագի կըներկայանան։ Մեր Աստուածային տաճարայ նկատմամբ ունեցած անտարբերութիւնը տեսնելով՝ կրնայ ըսուիլ, թէ չենք ուզեր Նորա կարօտանալ։ Ո՛չ՝ բարեկամ. որչափ Քրիստոնէի մը հէք վիճակին պարտա-

ւորութիւնը կըհարկադրեն զանի անկից հեռանալու, այնքան աղէկ կըլինի իրեն, երբ երթայ խոնարհի Սեղանին ոտքը, և խօսակցի իւր Աստուծոյն հետ, եթէ Տէրունական աղօթքը մի այն ըսելու ժամանակ իսկ ունենայ։

— Իրաւունք ունիս՝ պատասխանեց ամուսինը. ինչպէս գիտես՝ այնպէս ըրէ՛. դու արտիդ բարեպաշտական զգայմանց կամ ազդեցմանց հետեւելով՝ երբէք չես խաբուիր։

Մարիամ լսեց այս բոլոր խօսակցութիւնը. և երբ հայրը գնաց՝ ինքը շարունակեց զայն մօրը հետ՝ խնդրելով միանգամայն, որ ամէն օր իրեն հետ եկեղեցի երթայ։

«Շատ աղէկ՝ աղջիկս, ըսաւ մայրը. ուրախ եմ այդ գովելի անձկութիւնդ նկատելով։ Դու պիտի զգաս՝ թէպէտ ուշ, մանկութեան հասակէն Քրիստոնէական կենաց ունակութեան բարի

հետևանքը՝ մեր զբաղմանց ներած ա-
ռեն եկեղեցի գնալով։ Եկեղեցւոյ մէջ
նորածին տղան սուրբ մկրտութիւնը
կ'ընդունի, և Աստուծոյ որդւոյ թուոյն
մէջ կ'արձանագրուի. հո՛ն է նոյնպէս
մեր ննջեցելոց վերջին այցելութեան
վայրը, ուր քահանային և ժողովրդոյ
բարեմաղթութիւնները ստանալու կը-
տանինք։ Ուրեմն յաճախենք հոն մեր
կենաց բոլոր օրերուն մէջ այն բարե-
պաշտ զաւակաց նման, որ իրենց հօր
հետ խօսակցելէն աւելի հաճոյք մի չու-
նին»։

Այնուհետև Մարիամ ամէն օր մօրը
հետ եկեղեցի կը գիմէր. և որովհետև
ամէն տեսածներուն չէր կրնար խե-
լամուտ լինել, վասնորոյ Աննա կը-
մեկնէր նորա՝ զգուշանալով, որ ղբա-
տերն հոգին արծարծելիք խօսքերը՝
բարեպաշտութեան հրով ոգեւորած լի-
նին։ Յոճարին շուրջը պրպտուց մի

կար, որ «Խաչուղի» կ'ըսուէր։ Աննա
իւր աղջկանը հետ յաճախ կը շրջագա-
յէր այն տեղ, և կը բացատրէր՝ հոն
գտնուած պատկերաց նկարագրութիւն-
ները, որոնք աշխարհի Փրկչին Երու-
սաղէմ Գողգոթա լերան վերայ կրած
ցաւերն կը ներկայացընէին։

Օր մի հոն ժողովուած Քրիստոնէից
խումն բազմութեան մէջ երկու կանայք
կ'արտասուէին։ Մարիամ զանոնք մօտը
ցցուց՝ հարցնել ուզելով, թէ ինչո՞ւ
կուլան։ Աննա հասկցաւ աղջկան լուռ
հարցումը, և պատասխանեց. «Ան-
շուշտ տոքա յոյնոյիսի անձինք են, որոնց
մեծամեծ վիշտերն առաջնորդած են
դիրենք դէպ 'ի հոս՝ Երկնքին մխիթա-
րութիւն, զօրութիւն և խորհուրդ խնդ-
րելու՝ որոց կարօտ են։ Ներեաս ի-
րենց ապդամանաց մէջ հիւանդ ունին,
որոց կենաց բնական միջոցներով ազա-
ղատ թենէն յուսահատ՝ Աստուծմէ ա-

ուղղութիւն կըմաղթեն, կամ գոնէ նորա յաւոյ միութիւն մի՝ երկնային Փրկչին չարչարանաց և մահուան սրդեամբքը։ Այս պատկերները կըյիշեցընեն այն միջոցները՝ զորս Յիսուս Քրիստոս կրեց մահկանացուաց փրկութեանն համար, թէև ինքը անմեղ էր. և վշտացելոց վերայ այնպիսի խոր տպաւորութիւն կ'ընեն, որ մեղքէ կամ ցաւերէ աղատուած ըլլալն ինքնին կ'ըզգան. և այն ատեն այնպիսի ջերմեռանդութիւն մի կ'զգենուն, որոյ նմանը երբէք չպիտի զգային առանց այս մերձաւորութեան. և ասով լաւ ևս կ'իմանան Փրկչին և իրենց վշտաց, Նորա արբութեան և իրենց մեղաւորութեան խտիրը։ Սակայն դարձեալ հեռանալով, ակիս՝ չեն թողուր ձեռքէ ժուժկալութիւնն և յոյսը։ Այո՛՝ զաւակս, կրնամ զքեզ ապահովել, որ ես իսկ փորձած եմ շատ անգամ քեզ ըսած

խօսքերուս ճշմարտութիւնը։ Երբ տրտմութիւնը զիս կըպատէ, կամ երբ դժբաղդութեան մի սպառնալիքն կընկատեմ, ընդ փոյթ հոս կըդիմեմ, և մտաց վերայմամբ այս պատկերաց իւրաքանչիւրն աչքէ կ'անցընեմ։ Սուրբ շարժում մի յայնժամ կըտիրէ սրտիս՝ այն մտածութիւնն ազդելով յիս, թէ իմ Փրկիչս ինձմէ շատ առաւել նեղութիւններ է կրած։ Կրնամ նաև վստահեցընել զքեզ՝ աղջիկս, որ Աստուած միշտ օգնած է ինձ, կամ քաջալերութիւն և զօրութիւն տուած է՝ վարձուց արժանաւոր համբերութեամբ մի կրել այն նեղութիւնքը և տառապանքը, զորոնք Ինքը կըիրկէ ինձի։

«Ահա կըտեսնես՝ զաւակս, յաւելցուց բարի մայրը՝ ցուցընելով նմա Խաչուղոյն ծայրը մեծ Խաչելութեան պատկեր մի. կըտեսնես ահա՝ աշխարհի փրկութեան համար Քրիստոսի մահ-

ուան ճգնաժամուն ուրուագիծը : Ս. հա
այն Խաչին պատուանդանը շատ ան-

գամ եկած եմ խորհուրդ հարցընելու՝ ինձմէ և մարդկային իմաստութենէն յոյսս կորած ժամանակ : Իմ տարա-կուսանաց ու տառապանաց մէջ հա կ'սպասեմ ինձի, և զիս կը յանձնեմ երկ-

նային Խորհրդատուին : Ոչ թէ այս տեսած պատկերդ կարող է օգնել և ըս-փոփել, վասն զի քարաշէն և անդրիա-գործի աշխատանաց արգասիքն է. այլ զայն նկատելով՝ բուն իսկ նորա ներ-կայացուցածը կը յիշեմ. կը մտածեմ կը-րած ցաւերը և մահը, և ինձի օգնու-թեան կը կանչեմ այն անչափ սէրը, որ զինքը հարկադրեց Խաչը համբառ-նալու : Կը տեսնեմ գեղարդով մի կո-ղին ծակիլը, և այնպէս կ'զգամ, որ իբր թէ իմ վերայ կը հեղուն Իւր թանկա-գին արեան վերջին կաթիլները, որք զմարդ իւր մեղքերէն կը մաքրեն : Կը-տեսնեմ Նորա բազուկները, զորս տա-րածեց հոն՝ ամբողջ աշխարհը գրկելու, ու խիզճս կը զարթնու : Այն ատեն կ'ա-ռաջարկեմ Իրեն իմ կարօտութիւն-ներս, կը լսէ ինձի. և երբ կը դառ-նամ՝ խնդրած խորհուրդս սրտիս մէջ կ'զգամ» :

Այսպիսի խօսքերը անշուշտ փոքրիկ Մարիամի հոգւոյն մէջ երջանիկ պտուղներ յառաջ պիտի բերէին՝ պարարտ հողի վրայ ցանուած սերմի նման։ Աղջիկը զանոնք սրտին մէջ հաստատեց, և ամէն անգամ կը ջանար ապնիւ մօրը պէս բարի և բարեպաշտ լինելու։

Մարիամ տասնեւմէկ տարեկան էր, երբ օր մի մայրը նամակ ընդունեց իւր քաղաքէն. վասն զի Աննա Պուրկ—Ան—Պրէս ծնած չէր, այլ նոյն քաղաքէն բաւական հեռու Գարօլէի գիւղերէն մէկուն մէջ։ Նամակը կ՚իմացնէր իւր հօրը վտանգաւոր հիւանդութիւնը, որ իւր մօտալուտ վախճանը գուշակելով՝ մեռնելէն յառաջ աղջիկն անգամ մի տեսնել կը բաղձար։ Ի՞նչ կրնար ընել խեղճ կինը. այրը և աղջիկը ձգե՞լ, և այնքան տաժանելի ճանապարհը հետի միայն անցնիլ, երբ պարագայներն արգելք էին իրեն՝ կառք մի վարձելու։

Իւր ծերունի հայրը չմեռած ընդդիմելու փափաքը, մանաւանդ որդիական բարեպաշտութեան ձայնը՝ որ կը հրամայէր իրեն՝ վերջին այցելութիւն մ՚ընել ծերունւոյն, (զի վայրկեան մ՚ալ չէր կարող յապաղիլ) զրեթէ կը բռնադատէին զինքը յաղթել այն երկիւղին, որ գուցէ աղջիկն ու տխուրը իր բացակայութեան ատեն կարոտութիւն մ՚ունենան. բայց և այնպէս չէր գիտեր, թէ ո՞րն որոշէ։ Այս անտանելի տատամսութեան մէջ եկեղեցի գնաց, և քանի մի ժամանակ Խաչին պատուանդանը աղօթելէն յետոյ՝ տուն դարձաւ, և որոշեց որ ուղևորի։

Հրահանգ տուաւ Մարիամին՝ իւր տարակայութեան միջոցին ընելիք գործերուն նկատմամբ, պատուիրեց նմա շարունակել այն խնամքները՝ զորս հօրը պարտաւոր էր մատակարարել, և պատրաստելիք կերակուրները զեկոյց նմա։

«Զանցաւութիւն չընես երբէք՝ կ'ըսէր աղջիկանը. ամէն ուզածը անկոտոր մի թողուր, և ջանա՛ քո լաւութեամբդ գոհ ընել զանի։ Բարի կամք ունեցիր, և Աստուած կ'օգնէ քեզ։ Երբ հօրս համար ունեցած պարտաւորութիւններս կատարեմ, կը դառնամ շուտով. և կը յուսամ, որ գոհ պիտի լինիմ այն ատեն ամէն բան 'ի կարգին գտնելով, ինչպէս այսօր կը թողում»։

Անն մեկնեցաւ տնէն։ Այրը կը հաւատար, որ մեղապարտ կըլլինի զանի արգիլելով։ Օրերն իրարու կը յաջորդէին միշտ՝ առանց լրոյ երթևեկութեան. վերջապէս շատ շաբաթներ շոր ակնկալութեամբ անցնելէն յետոյ՝ հայրն ըսաւ Մարիամին. «Ձեմ կարող հասկանալ այս յապաղման և ուտանելի լռութեան պատճառները։ Կը տեսնեմ, որ ես պիտի պարտաւորիմ առաջին անգամ մեր վրայօք մօրդ տեղեկութիւն տալու։ Այո՛՝ վաղը առաւօտ կը գրեմ. այսօր շատ ապէկ չեմ. պէտք է որ հանգչիմ»։

Հեռաւոր առաւօտ Մարիամ նախաճաշը պատրաստելէն յետոյ՝ գնաց հօրը սենեակը զանի զարթուցանելու։ Բայց ի՞նչ ցաւ... նոյն քաջ մարդը վտանգաւոր կերպով հիւանդացած էր. սաստիկ ջերմ ունէր, և հազիւ կրնար խօսիլ։ Ի՞նչ դժբաղդութիւն, ի՞նչ ահարկու թշուառութիւն խեղճ զաւկին համար։ Այսու ամենայնիւ Մարիամ՝ որքան փոքր էր, չյուսահատեցաւ երբէք, այլ ջանաց մխիթարել զհայրը. բայց երբ տեսաւ, թէ օրըստօրէ հիւանդութիւնը կը ծանրանայ, և հայ ալ չունէին՝ քանի որ զայն հայթայթող ձեռքերը անկարող էին աշխատելու, չկրցաւ անխորհել կենաց՝ ապագայն չը մտածելու։

Հիւանդը՝ բժշկի և դեղերու կարո-

СССР

ութիւն ունէր, և Մարիամ բոլորովին դիրկ էր այս միջոցս գործածելու պարագայներէն։ Այս անձուկ վիճակին մէջ գնաց մէկ քանի դրացեաց հետ տեսնուելու, և նոցա ներկայեց թշուառ հօրը տխուր կացութիւնը. խեղճ աղջիկ՝ չէր գիտեր, թէ մարդ ո՞րքան անզութ կըլինի երբեմն՝ իրմէ ողորմութիւն խնդրող դժբաղդին դէմ. այն անձինքը՝ զորոնք շարժել կը յուսար իւր վիճակին նկարագրութեամբը, իրենց գլուխը կը շարժէին ու կ՚ըսէին, թէ շատ կը ցաւին իրենց անբաւականութեանը վերայ, որ չեն կարող օժանդակել նմա։ Մարիամ հարուստ և ողորմած կարծեցեալ անձերու դիմեց, բայց մի և նոյն պատասխանին ստացաւ։ Ոմանք ալ խստութեամբ կը վանէին զանի մուրացկանի պէս։

Աչքերը արտասուօք լեցուած՝ հազիւ կրնար սրունքներուն վերայ կենալ. բայց և այնպէս անօթութեան ալ դիմանալով՝ տուն հօրը քով կը դառնար։ Դժբաղդ հայրը ջերմի անդուլ կրկնութեամբ կը նեղուէր ու կը զառանցէր. կսկծեցուցիչ աղաղակներով կինը կը կոչէր՝ զոր կորանցուցած կը համարէր։ Խեղճ աղջիկը մահու երկիւղով անկողնին կից ուզեց աղօթել. սակայն անկարելի եղաւ. վասն զի ակներև նկատած բանվանդակ թշուառութեանց սակայն տեսարանը՝ զանի այնպէս դրաւեր էր, որ կենսական զօրութիւններն զոգոյս կորուսած էր։

Նոյն միջոցին հիւանդը՝ որոյ բոլոր ուժն սպառած էր մահուան վտանգէն, խոր քուն ընկղմեցաւ։ Աղջիկը տեսաւ զայն. և մօրմէն սովրած բարեպաշտական դասերը յիշելով՝ մտածեց, որ այս հանգիստ ժամէն օգուտ քաղէ, եկեղեցի երթայ, և Խաչին յանդիման Աստուծմէ խորհուրդ խնդրէ, որում՝

կարօտ էր իւր այս սոսկալի վիճակին մէջ։ Փոքրիկ ձայն մի հանելէ անգամ վախնալով, և հետևաբար ուրիշ ծայրերուն վերայ կոխելով՝ սենեկէն դուրս ելաւ, և դէպ 'ի եկեղեցին ուղղեց իւր քայլերը։ Արդէն ուշ էր ժամանակը, և դիշերային ստուերը քաղաքին վերայ կըտարածուէր։ Տաճարին ներքին կողմը և խաչուղին մութ քարանձաւի պէս նեմսյած էին։ Մարիամ կըծնրադրէր իւրաքանչիւր կոյանի առջև «Հայր մեր» ըսելու. և այսպէս հասաւ նա մինչև մեծ խաչելութեան առաջը, ուր պատրաստուեցաւ աւելի երկար աղօթք մի ընել։

Կանթեղ մի կը վառէր սուրբ պատկերին ճակատը, և քաղցր ու խորհրդաւոր լոյս մի կը սփռէր հոն, որ մասնաւորապէս որմոց և ճանապարհին մութեանը կ'ընդդիմանար։ Քրիստոսի յաւալի հայեցուածքը և տեղ ոյն ան-

շարժութիւնը սաստիկ ազդեցութիւն ըրին բարեպաշտ աղջկան հոգւոյն։ Այնպէս կ'երևէր իրեն, որ հայրը կը տեսնէր մեռած, և մայրը՝ որոյ երկար բացակայութեան պատճառը չէր հասկանար, և ակաւ լալ։ Աչքերը ջերմեռանդութեամբ դէպ 'ի սուրբ պատկերը յառած՝ օգնութիւն և սփոփանք կըխնդրէին առանց շրթանց շարժման։ Այս բարեպաշտ այլայլութեան մէջ այնպէս թուեցաւ իրեն, որ մանկանց երկնային Բարեկամը հայեցուածք մի կընետէր իւր վերայ, ու շնորհաց և գըթութեան ժպիտ մի կ'ուղղէր նմա. և իբր թէ կ'ըսէր.

«Ես այնքան նեղութիւն կրեցի բոլոր աշխարհի և քեզի իսկ համար՝ զաւակս. բայց ինչո՞ւ դու իմ վերայ չես բառնար այն բեռը՝ որ զքեզ կ'ընկճէ։ Ըսի ես մարդկան. Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես

հանգույցից զձեզ » :

Նոր ու քաղցր արտասուաց կաթիլներ թափիլ սկսան փոքրիկ աղջկան աչքերէն . սակայն ոչ թէ դառն յուսահատութեան, այլ Հաւատոց և յուսոյ :

« Տէ՛ր Յիսուս՝ ըսաւ աղջիկը հառաչանօք ընդմիջեալ ձայնիւ . տե՛ս՝ ահա ոտիցդ ներքև չուառ , անզօր և բոլոր աշխարհէ լքեալ աղջիկ մի : Եկայ ես քեզ խորհուրդ հարցնելու և քո այցելութիւնդ խնդրելու : Իմացո՛ւր ինձ, թէ իմ գտնուած թշուառ վիճակիս ի՞նչ դարման ընեմ : Ոչ թէ դու նեղելոց միսիթար ես միայն , այլ և ինչպէս բարի մայրս սովրեցուց . խորհրդատուաց Գերագոյնը : Ա՛ւա՛ղ՝ ի՞նչ պիտի ընեմ, եթէ դիս լքանես , . . . բայց ո՛չ . . . Դու չես մերժեր իմ խոնարհ աղաթքս . . . Պարտաւորութիւնս դիս կը կոչէ հօրս քով . ուրեմն ես հաստատ կը հաւատամ , և խիղճս ալ կը վկայէ ,

որ ճամբուս վերայ լաւ խորհուրդ մի կը խրկես ինձ : Ասի՝ Քո հայրական բարութենէդ կ՚ակնկալեմ՝ Աստուա՛ծ իմ . . . այո՛՝ կը յուսամ անշուշտ մահուանդ և անդին արեանդ շնորհիւ » :

Աղօթքը լմնցուց , միսիթարուած ոտքի ելաւ . սիրտը յուսով լցուած էր , և տանը ճանապարհը ձեռք առաւ :

Իր հիւղակի փողոցին անկիւնը դառնալու ատեն՝ իր ետեւէն ոտնաձայն լսեց , որ տակաւ կը մերձենար . վայրկեան մի յետոյ հեզիկ ձայն մի գինքը կանչեց . « Զաւա՛կս , զաւա՛կս՝ լսէ՛ , լսատսէ՛ ինձ , կ՚աղաչեմ » :

Մարիամ թէպէտ վախցաւ , այսու ամենայնիւ կանգ առաւ . և տեսաւ , որ վայելչազգեստ Տիկին մի դէպ 'ի իրեն մօտեցաւ՝ լապտեր 'ի ձեռին մարդու մի ընկերացած :

« Սիրո՛ւն աղջիկ՝ ըսաւ Տիկինը նոյն ձայնիւ . ես օտարական մի եմ . ճանա-

պարհը մոլորեցայ, և այսպիսի մութ ու խոտորնակ տեղեր ինկայ. ծառաս ալ ինձ նման չվոթած է. կրնա՞ս ինձ ցոյց տալ սուրհանդակաց օթևանը »։

Մարիամ գլուխը մէկ կողմ դարձուց նախ՝ արտասուքը սրբելու համար. վասն զի եկեղեցիէն դուրս ելնելէն 'ի վեր շարունակ լալէն չէր դադրած։ Յետոյ գլխովը ստորասական պատասխան մի տալով՝ սկսաւ առաջնորդել նոցա դէպ 'ի վերոյիշեալ օթեւանը։ Բայց սէտք էր, որ հօրը տանը առաջէն անցնէր. մօտեցաւ հոն, և սկսաւ արտասուել։

— Ինչո՞ւ կուլաս՝ աղջիկս, ըսաւ Տիկինը բարերար կարեկցութեամբ։

— Ներեցէ՛ք՝ Տիկին, պատասխանեց աղջիկը. հայրս միայնակ սպասկած է տունը... կըբարեհաճի՞ք վայրկեան մի ներս գալու. ձեզ ընկերանալէս առաջ կ'ուզեմ իմանալ, թէ ինձի կարօտութիւն ունի՞ արդեօք։

— Ամենայն հաճութեամբ՝ աղջիկս։

Երկուքն ալ մտան այն սենեակը, ուր Մարիամի խեղճ հայրը դեռ խոր քնոյ մէջ էր։ Աղջիկը անկողնոյն կից նստաւ հառաչելով. վայրկեան մ'ետքը ոտքի ելաւ, և Տիկնոջը դառնալով՝ ձեռքերը բռնեց, և արտասուօք խոնաւացած աչքանոգիները նորա վերայ յառեց։ Վերջապէս պատմեց նոա՝ իր ընտանիքն հարուածող թշուառութիւնը, և հօրը վիճակին պատճառած անհանգստութիւնը։

« Ուրեմն սորա համար էր՝ խե՛ղճ աղջիկ, որ Փրկչին Յիսուսի խորհուրդ կըհարցնէիր » պատասխանեց Տիկինը. և կարեկից արտասուք ոչ դոյզն ատեն նորա այտերը թանցին։

Այս խօսքը սաստիկ զարմանք աղդեց խեղճ աղջկան վերայ. և երբ մեկնութիւնը հարցնելու կըպատրաստուէր՝ Տիկինն ասաց.

«Հարկ է որ շուտով բժիշկ բերուի. վասն զի ինչպէս կըտեսնեմ՝ հայրդ որոշ վիճակի մէջ չէ։ Աղջիկս՝ վազէ՛ իսկոյն ինչեվանած պանդոկս, և իմ կողմանէ ըսէ՛ պանդոկապետուհւոյն, որ շուտով մէկ քանի հաւ և չիշ մի պատուական գինի յղէ այս տեղ։ Եւ դու Կիյոմ՝ ուելցուց նա իւր ծառային դառնալով, գնա՛ առանց յապաղելու Պառուա բըժիշկը գտի՛ր և ըսէ՛, որ հոս իրեն կ'ըսպասեմ»։

Ծառան դուրս ելաւ. Մարիամ ալ քայլերն դէպ 'ի սուրհանդակաց ինչեվանը ուղղեց. և ընդ փոյթ պաշտօնը կատարելէն յետոյ տուն դարձաւ։ Արդէն Տօքթօր Պառուա եկած էր, որ Տիկնօջ հետ մեծ յարգանօք կըխօսէր. սակայն ինքը նոցա խօսակցութենէն բառ մ'անգամ չհասկացաւ. ըստ որում Իտալերէն կըխօսէին։

Երբոր պանդոկի ապասաւորները Տիկ-

նօջ հրամայածները բերին, Տիկինն ըսաւ Մարիամին.

«Աղջիկս՝ կրնաս հանդիստ լինիլ։ Պ. Բժիշկը դիս կ'ապահովցնէ, թէ հայրդդ վտանգի մէջ չէ. նաև կըխոստանայ, որ իւր խնամքը անմիջապէս կ'սուղջանայ։ Այսօր իսկ քեզի հիւանդի պահնորդ մի կըխրկեմ, որպէս զի երկար աշխատանքէդ և տրքնութիւններէդ սակաւ ինչ դիւր գտնես. վասն առաւօտ ալ ես կուզամ ձեզ տեսնալու։ Պանդոկէն եկածներն քեզի համար են. վասն զի դու աննդեան կարօտ ես՝ շատ օր դժուարին պահեցողութիւն մի կատարելուդ համար»։

Գգուեց Մարիամը դրկին մէջ, ու դուրս ելաւ։ Եւ ինչպէս որ բժիշկը յոյս տուեր էր՝ հետևեալ առտուն հիւանդը շատ աղէկ վիճակ մ'ունէր. վըտանգաւոր երևոյթներն հեռացած էին արդէն։

Բժշկին հանապազօրեայ խնամօքը՝ հիւանդը անկողնէն ելնելու չափ զօրութիւն ստացաւ։ Ա՛ւ Մարիամի ուրախութիւնն անչափ էր. ո՞րքան շնորհակալ կը մնար Աստուծոյ՝ քանի որ իւր հօրը վերակենդանութիւնը կրնկատէր։ Ձէր անցներ օր մի, որ Տիկինը մարդ չխրկէր հիւանդին վրայօր տեղեկութիւն առնելու։ Մաքուր կտաւներով կըպահպանէր իւր բարերարութեամբն կենդանացած թշուառ հօր մի առողջութիւնը, և դեղերն անդանդաղ կը մատուցանէր. միով բանիւ օգտակար եղածն՝ ճշմարիտ մայրական խնամօք 'ի գործ կըդնէր։

Մեր ընթերցողներն անշուշտ հետաքրքիր են իմանալու, թէ այս անծանօթ Տիկինն ո՞վ էր, զոր Երկինք յղեց Մարիամի նոյն վայրկենին, մինչդեռ նա՝ դժբաղդ և լքեալ աշխարհէ, յուսալիտուր ամենատեղ՝ Նախախնամութենէն միայն օգնութեան կ'սպասէր։ Կոմսուհի մի էր՝ Ն... արքունի պալատական դեսպանի մի հետ ամուսնացած։ Ամուսնոյն հետ դէպ 'ի Գաղղիա ճանապարհորդեց այն յուսով, որ այն կողմերը իւր խարխուլ առողջութիւնն հաստատուի. և փափագին ալ հասած էր։ Պուրկ հասնելով Կոմսն ու Կոմսուհին՝ ուզեցին ութն օր հոն անցնել. որ ատեն Կոմսուհին բոլորովին առողջացաւ։ Այս բարեպաշտ Տիկինը՝ իւր երախտագիտութիւնը, կամ լաւ ևս ըսել պարտաւորութիւնը մատուցանել ուզելով Աստուծոյ՝ որ նոյն կենդանութեան պարգևատուն էր, ամէն օր եկեղեցի, մանաւանդ թէ շատ անգամ նախասատուութեամբ իմն Պուրկ—Ան—Պրէսի եկեղեցին կըգնար։ Շատ անդամ ամբողջ ժամեր հոն աղօթիւք կ'անցընէր։ Հոն էր այն իրիկունն ալ, երբ Մարիամ յորդ արտասուօք երկնից

օգնութիւնը կը հայցէր . այն ատեն այս աղնիւ Տիկինը սեան մը յետկոյս մթութեան մէջ թագուն՝ խեղճ աղջկան աղօթքը կըլսէր : Այս միայն բաւական եղաւ Տիկնոջ հետաքրքրութիւնը շարժելու՝ այսպիսի խոր թախծութեան պատճառն իմանալու համար : Մարիամի քայլերուն հետևեցաւ , որով և առիթ հանդիսացաւ մի դժբաղդ գերդաստանի թշուառութենէ և յուսահատութենէ աղատութեան :

Բարի Տիկինը իւր երախտիքն կատարելագործելու համար՝ այս դէպքը ամուսնոյն պատմեց , որ իսկոյն մարդ խրկեց Աննայի գտնուած գիւղը՝ նորա վրայօք տեղեկութիւն առնելու :

Աննա իւր հօրը մինչև վերջին բնակութիւնը ընկերանալէն յետոյ՝ դէպ 'ի Պրէս յուղի ընկած էր . բայց աշխատանքէ յաղթուած՝ ճանապարհի վերայ հիւանդ էր սրտակէր . այնպէս որ կարող-

ղութիւն ալ չունէր իւր ասպնջականն ընտանեաց աղաչելու , որ նոյն դժբաղդութիւնը ամուսնոյն զեկուցանեն :

Երբ Կոմսին սպասաւորը շատ խուզարկութիւններէն յետոյ՝ վերջապէս գտաւ զանի , նա արդէն սկսած էր առողջանալ . սակայն տակաւին մէկ քանի օր ալ սպասեց կացութիւնն առաւել ամրացնելու . և ապա բարերար Կոմսուհւոյն կամաց չհակառակելու համար կառք մի վարձեց , և երկու օր վերջը Պուրկ հասաւ :

Զուտաւ վարձուորի տան մէջ Աննայի վերադարձին առթիւ տեղի ունեցած տեսարանը անկարելի է պատմելու փորձը ընել . բայց և այնպէս կարելի չէ իսկ լռել Կոմսուհւոյն գթութիւնն ու մարդասիրութիւնը , որ այնքան երախտիք ընելէն յետոյ՝ հէք ընտանեաց դիւրակեցութեանն համար բաւական դրամագլուխ մի յանձնեց նոցա , որ-

պէս զի այնուհետև չբաւորութենէ ա-
ղատ կեանք մի վարեն ։

Կոմսուհին անոնցմէ բաժնուելէն իսկ
յետոյ՝ չդադրեցաւ փոքրիկ Մարիամի
բաղդին իսկ օժանդակելէ . և որպէս զի
գեղեցիկ աղջիկն ծնողացը ծանրութիւն
չլինի , զանի իւր ծախիւքը գիշերօթիկ
դպրոց մի դրաւ ։

Ահա այսպէս յաջողութիւնն և ու-
րախութիւնը՝ առաքինութեան հետե-
ւանօք մտաւ այն տունը՝ ուր դժբաղ-
դութիւնն էր տիրած մինչև այն ատեն.
և Աննա՝ որպէս զի Մարիամ չմոռնայ
իրենց ընտանեաց ծայրալիր թշուա-
ռութեան վիճակը այնքան բարերարու-
թեամբք հոգացողն ու դարմանողը ,
շատ անգամ կը հարցընէր նմա , թէ
ո՞վ է լաւագոյն խորհրդատուն ։

« Մեր Տէր Յիսուս Քրիստոսն է՝ կը
պատասխաներ փոքրիկ աղջիկը . միայն
թէ մեր անձը նմանեալ իրենը սիրով և
յուսով» ։

2013